ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի № 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի /զինղեկ/ թափուր տեղի համար / 1 դրույք /:
Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՍՄ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1) ,
2. Փաստափուլթ (դիպլոմ) <<Հանրակրթության մասին>> ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Մրցույթին մասնակցող անձը պարտադիր պետք է ունենա պահեստազորի սպայի կոչում և տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2020թ. մարտի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10 ^{00}-ից 15 ^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020թ մարտի 6 -ին՝ ժամը 14 ^{00}-ին, ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի № 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում: Հասցե՝ ՀՀ Կոտայքի մար. Չարենցավան 8-րդ թաղամաս, Ռուսովի 7

Տեղեկությունների համար զանգահարել (0226) 4-54 -98 հեռախոսահամարով: